

բառիք հնչիւնը, և ահա այն տեղից էր շողում Բեթղեհէմի հովիւներին երեացող լոյսը. զուարթացաւ, ուղղուեց և ապա նայեց իւր վերքերին, տեսաւ, նրանք ապաքինուել էին: Պարզ էր, Բարձրեալի Որդին էր ծնուած: Փառք տուաւ Աստուծուն և ցանկացաւ խաղաղութիւն և սէր երկրի վրայ և մարգկանց մէջ:

Երեացել է աշխարհի վրայ Բարձրեալի Որդին, այդ են հնչեցնում եկեղեցու զանգակները. նրանք աւետում են մի նոր երջանիկ կեանքի սկիզբը, սիրոյ կայծեր են սփռում ատկութեամբ լի այս աշխարհի վրայ: Սյուր սէրը յաղթանակում է. հաւատարմութիւնը աւելի հաւատարիմ է դառնում, քրիստոնեայ մարդկութիւնը իւր հրեշտակային անմեղ մանկութիւնն է յիշում Աստուածորդու օրօրոցի առաջ, մի կամուրջ է ձգում իւր մանկութեան գեղեցիկ անցեալի և ակնկալած գեղեցկագոյն ապագայի մէջ. ապագայ երջանկաբոյր կեանքի երազանքներով տոգորւում: Մենակ մնացած խոտասերտ մարդն անգամ մանուկ է դառնում, որ մանկական լեզուով նարածին Աստուածորդուն աղերսի. Դու Բարձրեալի որդի, նորոգիր մեզ, վերածնիր մեզ. սիրոյ կապով միացրու այս չարատանջ բաղամախիտն մարդկութիւնը, մխիթարիր և օրհնիր նրանց տունն ու բունը, նրանց արդար աշխատանքը: Սովրեցրու մեզ սիրել և ազօթել, ազօթել և սիրել:

ՅՐ. ԽՈՏԱՅԻԿԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ, ՄԵՁ ԵՒ ՁԵՁ ՄԵԾ ԱԻԵՏԻՔ.

«Խորհուրդ մեծ և սքանչելի, ու յայտն աւուր յայտնեցաւ, հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի»:

Համայն աշխարհի և նրա մարգկայնութեան սեռի այսրօւայ 'մեծ և խորհրդաւոր ծնունդ՝ Նազովրեցի մանուկն Յիսուս իւր Բէթլէհէմեան անշուք մատրի մեծախորհուրդ ծննդեամբն զալիս է սքանչացնելու և հիացումն

պատճառելու մեր տկար մտքի անհաս կարողութեան՝ իւրն հրաշալի ծննդեան բացառիկ վեհ խորհրդաւորութեամբ, որը ծնւում է ոչ միայն իւր յաւիտենականութեան և փառքի համար, այլ և Աստուծոյ փառք և զօրութիւն ունայն և անարգ համտրուած աշխարհի և նրա իրական բարձրութեան վերածման սրբազան գործի համար, առնելով մարմին և մարդկային բնութիւն մօրից, մարդը աստուածացնելու համար:

Եւ թի՛ղ զարմանք, ի՞նչ ենք տեսնում՝ նրա հրաշալի ծննդեան աւետարեւր արշալոյսին, անարգ և չուառ խաշնարած հովիւների միջև, որոնք ողջագութեան փարումներով, քաղցրանուագ երգերով փոխանակում են միմիանց երկնքի և երկրի խաղաղութեան և հաճութեան սիրոյ աւետիսը՝ դռնելով՝—«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութեան, ի մարդիկ հաճութեան . . . »:

Եւ ի՞նչ աւելի մեծ և ուրախարար՝ քան երկնքի երկրի հետ շաղկապուելը, երկրի երկնքի հետ, որի վեհութիւնը փառաբանում է եկեղեցին վերագոչելով—«Այսօր երկինս երկիր եղև վերստին քո նորոգմամբ», որպիսի գաղափարական իմաստութիւնը տակաւին իւրացնել չէ կարողացել Աստուծոյ պատկեր մարդկայնութիւնը իւր բոլոր լուսաւորութեամբ և հմտութեամբ:

Ահա, այս նուիրական օրուայ նախօրեակին՝ հայ առաքելական եկեղեցին մեծաշուք հանդիսաւորութեամբ տօնում և քարոզում է իւր գաւակներին՝ իւր երանական նախնիքների հարազատ հողւով և շնչով—«Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ» . . .

Քրիստոսի կենդանարար յայտնութեամբ համակուած հայ որեւոր, միթէ իմ թոյլ գրիչը և լեզուն կարող են սահման և կշիռ գնել և թափանցել մեր շնորհագարդ նախնիքների երկնասլաց գաղափարների խորութեան գիրկը, բացաղբելով ձեզ նրանց աստուածայատուկ մտածելակերպի և այսօրուայ վեհութիւնը:

Համայն քրիստոնէութիւնը՝ ի վաղուց անտի, հակընդէպ ճշմարիտ քրիստոնէականի և նրա աւետարանի վար-

դապետութեան, Քրիստոսի միախորհուրդ անբաժանելի՝ երկիցս ծննդեան տօնական յիշատակութիւնը բաժանել է երկու անշատ—անշատ տօների:

Միայն և միայն հայ ազգայնական սրբազան եկեղեցին է, որ իւր անաղարտ դաւանաբանականի խոհական և հանճարիմաստ հոգեբանութեան շնորհիւ համառեց հաստատ և անսասան պահպանելու մինչև Դ. դարն կատարուող տօնական կարգաւորութիւնը՝ ի միասին և անբաժան տօնելով փրկչական երկիցս ծնունդն, ըստ աւետարանական հոգու, որպիսի անմեկին լոյսի պէս պարզ ճշմարտութիւնը ցարդ թեր և դէմ պատճառաբանութիւնների է ենթարկուել թէ՛ օտարների կողմից և թէ՛ իսկ մերայինների, մինչդեռ ակներև է, որ եկեղեցին դաւանում է երկու ծնունդ Փրկչի անձնաւորութեան մարմնաւորութեան մէջ, ծնունդ ի մօրէ՛ ծնունդ ըստ բնականին և ծնունդ ի հոգւոյ և ի ջրոյ՝ ըստ գերբնականին, որն և ինքը Փրկիչը պարզապէս լուսաբանեց օրինական Նիկոյիմոսին՝ յանդիմանելով նրա ազիտութիւնը՝ բնական և գերբնական ծնունդների խորհրդաւորութեան վերաբերեալ ասելով.—դու չես կարող իմ արքայութեան ժառանգորդ լինել, մինչև Բ. անգամ չծնուիս, «զի ծնեալն ի մարմնոյ մարմին է, իսկ ծնեալն ի հոգւոյ հոգի է...»: Ահա թէ ինչո՞ւ ցայսօր և թերեւ յաւիտեան հայ եկեղեցին որպէս միակ բացառութիւն՝ առաքելական դարու սովորութեամբ՝ անխափան է կատարել Փրկչի երկու ծնունդները և պիտի կատարէ, առաթուր կոխելով այն բոլոր լուսանքները և բարուրանքը՝ որ ընդհանուր եկեղեցին թիւրիմացաբար կուտել է և կուտում է հայ եկեղեցու վիսին, որը և այսօր նոյնութեամբ կատարում է իւր մարդացեալ Փրկչի ծննդեան տօները՝ ի միասին տօնելով ծնունդն ի մօրէ և ծնունդն ի հոգւոյ: Մանաւանդ որ Փրկչի Մկրտութիւնը՝ ոչ թէ մի քանի օրից կամ մի քանի ամսից յետոյ տեղի ունեցաւ, այլ երեսուն ձիգ տարիներից յետոյ, և հաւանական է, որ Նա յանձն կառնէր իւր մարմնաւոր ծնունդը փառաւորելու՝ իւր գաղափարական հրաշափառ օրուայ ծննդեամբ:

Սակայն այդ փոյթ չէ մեզ, որպէս և եկեղեցու պատմադիտութեան հոգուն. մեզ զբաղեցնողը խորհրդի սրբազան վեհութիւնն է՝ իւր խորախորհուրդ էութեամբ:

Իսկ քեզ, հայ որեար, կ'մնայ չբաւականանալ ամանորիդ շեմքում միայն Փրկչի ծննդեան յիշատակութիւններով, այլ քեզ անհրաժեշտ է հետեւել երկնային հրեշտակների օրինակին—իջնելու մարդկութեան աղքատ և խեղճ ու կարօտ դասակարգի խրճիթները՝ բարոյական և նիւթական այցելութեան ու նրանց հետ փառաբանելու քոյզ Փրկչի հրաշափառ և մեծախորհուրդ վերանորոգիչ ծնունդը և Աստուածայայտնութիւնը:

Սիօն վարդապետ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ

Մի բաւական ընդարձակ յօդուած է նուիրուած այս հարցին Церк. Вѣст. № 50-ում, ուր հեղինակը ճգնում է առանձնապէս որոշել, թէ ռուլիսի շարժառիթներ են դեր խաղում մի կողմից յունական և ռուսական եկեղեցիների և միւս կողմից արեւմեան կաթոլիկ եկեղեցու մէջ՝ նրանց միացման խնդրի առթիւ: Յոյն եկեղեցու մէջ միացման ձգտումը միշտ էլ հանդէս է եկել, հեղինակի կարծիքով, ոչ թէ ձեական աւանդութեան ուժով, ոչ թէ յոյն կեանքի դժուար հանգամանքների ազդեցութեան ներքոյ, որոնք կապուած էին մուսուլման աշխարհի դարեւոր տիրապետութեան հետ, այլ այդ ձգտումը պայմանաւորուած է եղել դերազանցապէս կրօնական շարժառիթներով: Ապա հեղինակը նկարագրելով թէ ինչպէս յոյն տարրը մինչև հիմա էլ սերտ կապերով կապուած է Օրթոդոքս եկեղեցու և նրա տիեզերական պատրիարքի հետ, ասում է «Յոյնի եկեղեցական ինքնագիտակցութիւնը պատկերացնում է Արևելքի և Արեւմուտքի կրօնական միութիւնը այն մտքով, որ պահպանուի օրթոդոքսութեան առաջնութիւնը և գլխաւորութիւնը, առանց այլադաւանութեան որեւէ զիջում անելու, առանց նուազեց-